

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կես տարվանը 6 բուրլ: Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարազգապաշտիք դիմում են ուղղակի
Тифлисское Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են խարբանչիւր բանին 2 կոպեկի:

Նորին կայսերական Մեծութեան Պալատի կամերգեր, իշխան ԵԱՉՈՒ ԳՄԻՏՐԻՆՎԻՉ ԹՈՒՄԱՆՈՎԻ այրին, իշխանուհի Աննա Իվանովնա ԹՈՒՄԱՆՈՎԱ իր գուտարներով և իր փեսան, Նորին կայսերական Մեծութեան Պալատի կամեր-իւնկեր իշխան Նիկոլայ Պավլովիչ ՌԻՐՈՒՍՈՎ, խոնարհաբար խնդրում են հանգուցեալ իշխան Եագոն Գովարինիվիչի ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալ յուզարկաւորութեան հանդիսին նորա բնակարանից դէպի ՎԱՆՔԻ մայր-եկեղեցին, այս կիրակի օր, հոկտեմբերի 9-ին, առաւօտեան 10 ժամին: Իսկ մարմնի ամփոփումն տեղի կունենայ ընտանեկան դամբարանի մէջ, Սուրբ-Կարապետի եկեղեցու պարիսպներում:

1—2

ԲՃՇԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅՈՒ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ:

ԿԱՆԱՆՑ հիւանդութիւններով առաւօտները 10-ից մինչև 12 ժամը: Տղամարդկերանց ՆԵՐՔԻՆ և ԿՈՎՈՐԻԻ հիւանդութիւններով երեկոյեանները 5-ից մինչև 7 ժամը: ՍԵՐԳԻԵՎՍԿԻ փողոց, ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՅԻ տունը՝ համար 6:

2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ արդար է:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նա- մակ Ս. Պետերբուրգից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՈՒՅԻՐՆԵՐ:— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԿԱՆ: Պ. Հայկունու կրթական և վայճերի:

ՄԻԹԷ ԱՐԴԱՐ Է

„Новое Время“ լրագիրը, պ. Սուվորի- նի օրգանը, որ յայտնի է իր զրական ան- բարեխղճութեամբ, այս օրերս Մոլչանովի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՐԻՏԻԿԱՆ ԵՒ «ԿԱՅԾԵՐԸ»

Ես չարունակում եմ պ. Հայկունու «վայճերի» մէջ ցոյց տուած սխալների մասին խօսել:

4. «Որ ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ լաված կամ տեսնված չէ, որ պարսիկ խաները իրանց հրաւերելի և կերտուումի ժամանակ հայ քահանա- ներին հրաւիրելով իրանց տուն ստիպում էին նրանց, խաների զուարճութեան համար «պատա- բազ» մատուցանել, եկեղեցական սպաս և ծէս կատարել»: Որ «այդպիսի հանդէսներից մէկի մէջ, խանը հրամայեց քահանային սաղաւարտ դնել իւր շան զլիւնին, շուրջաւոր գցել նրա վերայ, և ստի- պեց տէրտէրին իւր բուրվաւով խնկարկել շա- նը» (281):

Կարծեմ, մահամտական մոլորանդութիւնը պաշտպանող պ. Հայկունին, եթէ հետեւել է մեր մամուլի վերջին տարիներում հաղորդած տեղե- կութիւններին, պէտք է շատ անգամ կարգացած լինի, թէ ինչպէս թիւրքաց Հայաստանում մահ- մտականները արդով ծեփում էին քրիստոնէս- կան տաճարների պատերը, ինչպէս խաչը շան վզից կտրեալ տարով ման էին անում փողոցներում, ինչպէս քրիստոնէական եկեղեցու բնի վրա մութ- բուրներ էին պար անում և այլն: Թողեալ ժա- մանակակից մամուլը, մեր պատմութիւնը լի է հա- զարուածի այս տեսակ սքրապիւլութիւնների նկա- ղարութիւններով: Բայց եթէ աւելին ցանկա- նում է տեղեկանալ պ. Հայկունին, թող կարդայ Վ. Պօլտի հայոց պատրիարքարանի «Տիգրանի կա- ղերը», որը դուրս է բերած պատրիարքարանի քահանայի պաշտօնական արձանագրութիւննե- ռից: Նրա մէջ Բաբիբի «վայճերի» մէջ նկարա- գրածից աւելի զարհուրելի բաներ կը տեսնել պ. Հայկունին:

անուշտ ստորագրված մի յօդուած է նուր- բել կովկասին և Անդրկովկասին:

Երբ որ մի ուսու ցանկանում է, որ կով- կասը և Անդրկովկասը բնակեցնեն միմիայն ուսուներով, ուսու երկրագործներով,—այդ տեսակ ազգասիրութիւն մենք ուսուի տե- սակէտից կատարելագույն իրաւացի և հասկանալի ենք համարում, քանի որ ամեն մարդ պէտք է սիրի իր ազգութիւնը ամեն- քից վեր, պէտք է ջանայ նրան ուրիշներից բարձր դասել:

Իսկայ եթէ ազգասիրութիւնը գովելի մի զգացմունք է, ուրիշ կողմից զրպարտու-

5. «Որ քուրդ կինը իւր մարդու կորուստը, կամ մահը ողորալիս չէ ասում թէ նա «լաւ ա- տաղակ էր» (265) այլ թէ լաւ կարիչ էր:»

Կարծեմ, պ. Հայկունին այնտեղ կանգնած լի- ներ և իր ակնաջով լսած լինել, թէ քուրդ կինը այդպէս չէր ասում, այլ այնպէս էր ասում,—կար- ծեմ քուրդ կինը խօսքն էլ մի պատմական իրո- դութիւն է: Եթէ պ. Հայկունին այդքան նշանա- կութիւն է տալիս մի երեակայական քուրդ կինի խօսքերին, ապա ինչու է աղաւարտում այդ կնիքը յիշողութիւնները: «վայճերի» մէջ այսպէս է զըր- ված. «Կրկին անգամ ամուսնանալը, մեռած կամ սպանված տղամարդից յետոյ, քուրդ կինը համար համարվում է նախատիք: Նա մեռած է միշտ այրի, միտքարում է իրան այն քուրդ յիշողութիւննե- ռով, թէ իր այրը մի «լաւ աւագակ» էր, թէ նա մնաց միշտ մաքուր երկնոտութեան արտաից, թէ նա երբէք իր թիկունքը չը դարձրուց թշնամու- դեմ, թէ նա սիրում էր իր ամուսնին, որքան սի- րում էր իր արարական նժոյգին, և երբէք նրա սիրտը չը գրաւեց ամենազիջելի իր ցեղի աղջկե- ներից» (265): Պ. Հայկունին, եթէ ճանաչում է բարբրին, պէտք է հասկացած լինի, որ «աւագակ» և «կարիչ» բառերը քրդի լեզուում համանիշ են. աւագակութիւնը քրդի համար քաջութիւն է և ոչ անպարտականութիւն: Եթէ քուրդ տղամարդը աւա- ղակութիւն չէ արել և մի քանի մարդիկ չէ սպա- նել, ոչ մի լաւ աղջկի չի ցանկանայ նրա հետ ամուսնանալ:

7. «Որ Մշու (թէ վանայ) դաշտի ծովակը կրչվում է ոչ թէ «Արշակայ ծովակ» (293), այլ Արշակայ ծովակ: Սկզբում ևս կարծեցի թէ դա տպագրական սխալ է, բայց մի և նոյն բառը մի քանի տեղ կրկնված տեսայ:»

Արշակայ ծովակը ոչ Մշու դաշտում է և ոչ վանայ դաշտում, երբ պ. Կրիտիկոսը կամենում է ուղղել մի տեղաբանական սխալ, նախ և առաջ պէտք է գիտենայ նրա տեղը: Սուտ է և այն, թէ «վայճերի» մէջ այդ բառը մի քանի տեղ կրկնվել

Թիւնը այլ ազգերի մասին դատարարելի մի վարմունք է: Պ. պ. Սուվորին և Մոլչանով կատարել իրաւունք ունեն առջարկել, որ մեր երկիրը բնակեցվի ուսուներով,— բայց ոչինչ իրաւունք չունեն անարգելի զրպարտել ուրիշ մի ազգութիւն:

„Новое Время“ լրագիրը բացարձակա- պէս յայտնում է, թէ հայերը անընդունակ են երկրագործական աշխատանքի, անըն- դունակ են մի օր և է արդիւնաբերական աշխատանքի, թէ հայերը միմիայն գիշատիչ (хищнический) մի ազգ են, մի ազգ, որ բաղկացած է միմիայն հարստահարչներից:

Ամենքին յայտնի է, որ հայերի մեծ մասը երկրագործ և արհեստաւոր աշխա- տանք, արդիւնաբերող մի ժողովուրդ են, ամենքին յայտնի է, որ հայը մենք ստա- նում ենք Եօրագետի և Ալէքսանդրապոլի բուն հայ գիւղերից, որտեղ հայերը բնակ- վում են անխառն թուրքերից: Ամենքին յայտնի է, որ բրիտն ձը, բամբակը ար- դիւնաբերում են Երևանի նահանգի գլխա- տարապէս հայ երկրագործները, ամենքին յայտնի է, որ շերամագործութեամբ երկրի մէջ գլխաւորապէս հայերն են պարագում: Վերջապէս, ո՞ւմ յայտնի չէ, թէ հայերի աւելի, քան երկու երրորդականը, երկրա- գործներ և արհեստաւորներ են, իսկ գու- ցէ մի երրորդական միայն ամբողջ ժողովուր- դից, թէ վաճառական են և թէ ուրիշ այլ և այլ դասակարգերին պատկանող: Բայց „Новое Время“ լրագրի համար այդ ճշը-

մարտութիւնները նշանակութիւն չունեն. այդ լրագիրը հաւատացնում է, որ հայերը միմիայն գիշատիչ ժողովուրդ են, անըն- դունակ որ և է արդիւնաբերութեան: Մի- թէ գիշատիչ է, կը հարցնենք մենք, այն երկրագործ բազմութիւ դասակարգը, որ գիշեր ցերեկ, դարերի ընթացքում, իր երեսի քրտինքում աշխատում, վարուժ, ցա- նում, հնձում, կարում է, այն երկրագործ ժողովուրդը, որ կովկասեան բնիկ ժող- վրդների մէջ, Հակոտհաւուհէի, Պէցոլդի և շատ ուրիշ օտարազգի ուսուսնական ճա- նապարհորդների վկայութեամբ, համար- վում է ամենաընդունակ երկրագործ ժող- վուրդ: Այդ մի և նոյնը չէ վկայել միթէ նորերումն ուսու ճանապարհորդ-պուրելիսս Եւզենից Մարիօ:

Նոյն իսկ ուսուց կառավարութիւնը այդ ճշմարտութեան մէջ, երևի, վաղուց համոզ- ված էր, քանի որ նրա ջանքերով դրաւ վե- ցան դէպի Անդրկովկասը ահադին հայոց գաղթականութիւններ, թէ պարսից և թէ թիւրքաց Հայաստանից: Ալէքսանդրապոլի և Ախալցխայի կողմերի հայ երկրագործները մեծ մասամբ գաղթականներ են Եւրոպայից, իսկ Երևանի նահանգի արեւելեան մասի հայ երկրագործները մեծ մասամբ գաղթական- ներ են Պարսկաստանից: Եւ նրանց քաջա- լերէլ է և նպաստել է նրանց գաղթական- նութեանը նոյն ինքն ուսուց կառավարու- թիւնը: Այդ հարցին հետ ծանօթանալ ցանկացողները թող կարդան 1852 թ.ին

12. «Որ Բարդուղիմէոս առաքելոյ վանքի կշտի դաշտը չէ որ «Հարխտան է կոչվում» (319), այլ համանուն գիւղը որոյ անունով և դաշտն էլ կոչ- վում է Հարստանու դաշտ:»

Նախ և առաջ, Հարխտան չէ, այլ Հարխտ- տան է, կրկնուր, «վայճերի» մէջ խօսքը դաշտի մասին է և ոչ թէ դիւղի մասին, իսկ թէ դիւղն էլ կոչվում է դաշտի անունով,—այդ ո՞վ է հերքում:

13. «Որ մարբիներն (մուքուրիներ) և մամը- քանները (քրդական ցեղեր են) ոչ երբէք կարող էին միմեանց հետ շարունակ մէճեր և կռիւներ ունենայ (320), որովհետեւ առաջինները բնակ- վում էին և են Հաղբակում, իսկ երկրորդները— խնուում,—մի անաղին տարածութիւն հեռու մի- մեանցից:»

«վայճերի» մէջ չէ ցոյց տուած յիշեալ քուրդ ցեղերի բնակութեան տեղերը, և ինչ տեղ պէտք է ցոյց տալ թախառական քրդին, որը անպարզ գաղթում է: Իսկ պ. Հայկունու ցոյց տուած տեղերը, որպէս նա կարծում է, ահա գին տարածութիւն և մի հեռու չեն միմեանցից: Խնուսը հեռու է Աղբակից մի օրվայ ճանապար- ճով միայն:

14. «Որ ճօյամբիլը գտնվում է ոչ թէ «կոր- դուց լեռների մէջ» (322) այլ Մոկաց և Կոր- ճէից լեռների:»

Մոկաց և Կորճէից լեռները մի և նոյն Կոր- դուց լեռներն են: Եթէ պ. Հայկունին չը գի- տէ, որ Կորդիք և Կորճէք մի և նոյն երկրներն են:

15. «Որ Արտամէտը գտնվում է ոչ թէ «Հայոց ձորում» (323), այլ վանայ դաշտում:»

Սուտ է, «վայճերի» մէջ չէ ասված, թէ Արտա- մէտը գտնվում է Հայոց ձորում: Սխալ է և այն, թէ Արտամէտը գտնվում է վանայ դաշտում: Վան դաշտը դաշտ չունի, նրա դաշտը ծովակի հարթ մակերևոյթն է: Եթէ պ. Հայկունին կամե- նում է Արտամէտը դիւղի տեղն իմանալ, նա զը- անվում է Հայոց ձորի մուտքի մօտ:

16. «Որ Հոգուց վանքը գտնվում է ոչ թէ

պ. Շոպենի հրատարակած գիրքը „Исторический памятникъ состоянія Армянской области“.

Երբ մի քանի տարի առաջ էլ հարց եղաւ թէ ի՞նչ ազգութեանը պատկանող երկրագործներով ամենից յարմար է բնակեցնել Երևանեան նահանգի անջուր հողերը, այն ժամանակ գիտնական և ակադեմիկոս պ. Արիւն, որ ինքն գերմանացի է, ընդդէմ եղաւ գերմանացի պ. Հորովի պրօէկտին՝ գերմանացի կոլոնիստներով բնակեցնել վերջիշեալ հողերը, մի և նոյն ժամանակ իր գեկուցման մէջ այն մտաբեր յայտնելով թէ հիւսիսային ոչ մի ազգ չի գիտնայ Երևանի նահանգի տափարակ տեղերի սպանիչ կլիմային և պնդում էր, որ միայն հայ երկրագործներով հնարաւոր է բնակեցնել այդ տեղերը:

Մի թէ պ. Մովսէսի, Մոյսիսովի և նրանց պէսնեան յայտնի չէ, որ հայ ազգը գլխաւորապէս աշխատասեր երկրագործներ էր և բարեկամ, իսկ զիշատիչներ և հարստահարողներ այդ ազգի մէջ էլ կան համեմատաբար նոյն թւով ինչ թըւով նոյն գիշտակներ և հարստահարողներ կան ամեն ազգի մէջ:

Անարդար կը լինէր, մեր կողմից դատել, օրինակի համար, ուսուցողի մի մի քանի վաշխատու, կաշառակեր և սրանց պէս անխղճները միայն աչքի առաջն ունելով, այն ինչ մեզ յայտնի է որ բուն ուսուցողները, ընդհանրապէս բարի և մարդասէր բնավորութիւն ունին:

Նոյնը թող չանի և „Новое Время“ րազդիրը թող նա հայ ժողովրդի ընդհանրութեան վրա չը դատի մի քանի գիշտակներ և հարստահարողներ աչքի առջև ունելով: Ի՞նչ կը լինէր իթէ մենք դատէինք ուսուցիչի վրա Մովսէսի, Մոյսիսովի պէս խաւարամիտներ աչքի առաջն ունելով և նրանց

որպէս ուսուցիչն բնավորութեան կատարելատիւներ ընդունելով:

Ոչ, մենք պատրաստ ենք ճորդներովն Նչէզերին, Օտորովսու, Սոսակէլիլի, Կրակեկու պէս անխղճապաշ, անխղճ մարդկանց որպէս ուսուցիչն բնավորութեան կատարելատիւներ ընդունել և ոչ թէ Մովսէսի, Մոյսիսովի պէս խաւարամիտ անձինքներն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Հոկտեմբերի 1-ին

Սեպտեմբերի 27-ն էր: Ես տեսայ ինչպէս իվան Սերգէյիչը դադար դուրս բերին վարչական երկրագործ կայանից և դրին յուրաքանչեւ բնակութեան ամպօղակում մէջ: Ես մասնակից էի այդ յուրաքանչեւութեանը... Երկուշաբթի կանգնած էի նրա դագաղի մօտ... Տեսայ նաև, ինչպէս իջնուցին դագաղը խորը գերեզմանի մէջ, ինչպէս ծածկվեցաւ հողով այդ դագաղը: Լքուեցի դամբանական ձառեղք: Բայց հարցէ՛ք ինչ ձանձիղ՝ Տուրքիսի մտածա: Պիտի պատասխանեմ... Ո՛չ: Սա թաղում էր: Երբ պատմաբանների երկարածից շարքում դնում էի, ստեղծ ստեղծ անցնում էր մարդիկ թէ այդ ինչ ստանալու թիւն է կել վրաս... Նայում եմ շուրջս, նայում եմ ամպօղակի. մի և նոյն հանդարտ, մեղմ դատարար եմ նշմարում հաղաբար պատկերների վրա: Թախծ ու տիրութիւն չէ նկատում: Երբ հարկեր հազար ամբողջ միջոց անցանք և այդ օրուայ այդ ակնարկով յատկանիլի մի կէտը անգամ չը խուցից: Ես մտածում չէի, մտածում էի ամբողջի հետ, —նրա խօսքը ու մտքը դարերից դար պիտի աւանդվին և այդ դագաղը այսօր նրա անուն մտքերին նոր արիւթիւն, նոր ոյժ, նոր կենսութիւն տալիս էր: Երբ կենսութիւն ու ոյժ են բուրվում այդ դագաղից, միթէ՞ մենք մահ կարող ենք որոնել այնտեղ: Համայն աշխարհը ընդունել և Տուրքիսի մտածութիւնը... խաղաղութիւն հողից քու, մեծ հեղինակ:

Տարեգրքը կը նկարագրէ, անշուշտ, մի առ մի այդ յուրաքանչեւութեան պարագաները, ժողովը կը մեկնէ նրանց ներքին մտքերը, իսկ ես անկարող եմ կատարելու թէ մէկը և թէ միւսը: Պարզ նկարագրութիւններ անել աւելորդ է, դուք այդ կարգաչիք մայրաքաղաքը: Երբ յուրաքանչեւութեան ժամանակը չէ:

«Մշակի» պատմութեան պատկեր, որիչ մի քանի պատկերի հետ վճարված գերեզմանատան եկեղեցու մասը: Լուսւմ ենք որ այդ պատկերը պահպանելու համար կը յանձնվին հրապարակական արքունի գրաստանը: Մնացեալ պատկերը (հարկերից աւել) հանդիսականները միանգամայն բաժանեցին միմեանց մէջ իրանց հետ յիշատակ տանելով մի մի վարդ, կամ մի մի տերև... Գաս. Եղաբաճ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 5 հոկտեմբերի

Երկուշաբթի, հոկ. 3-ին, կայացաւ քաղաքային խորհուրդի նիստը: Քաղաքապետ Մատիսով բացեց նիստը կարճ կերպով յայտնելով այն խորհրդի ցաւակցութիւնը, որ ունեցաւ Թիֆլիսը իր նախկին քաղաքապետի իշխ. Եւզո թւում մասնով: Քաղաքային խորհուրդը իր նախկին քաղաքապետի յիշատակը պատուելու համար վճարեց վերականգնող և կատարվեցաւ, և յուրաքանչեւութեան օրը նոյնպէս բոլոր ձայնաւորներով ներկայ լինել: Սորա հետ որ միտային քաղաքապետը յայտնեց, որ առեւտրական և հարկատուների վարչութիւնները նոյնպէս կարգադրել են պատշաճաւոր կերպով պատուել հանդուցելու յիշատակը: Սրանից յետոյ ձայնաւոր պ. Ալաղաթով ներկայացրեց մի գրաւոր յայտարարութիւն, որի մէջ համառօտ կերպով յիշում էր այն արդիւնաւոր ծառայութիւնները, որ արաւ հանդուցեալ իշխ. թումանովը քաղաքին: Բազմաթիւ օրոհարգող գործերից պ. ձայնաւորը յիշում էր իր յայտարարութեան մէջ Թիֆլիսի Արհեստաւորաց ռուսաւարանը, որը հանդուցեալով, անանց մի կողմէ մեխելու քաղաքային փողոցից, միմիայն մասնաւոր նուիրատուութիւններով (40,000 ռուբլ) և անխնայ աշխատանքով կանգնեց նրա շինութիւնը, որով այսօր քաղաքային խորհուրդը և վարչութիւնը պարծնում են. այնպէս չէր ամենքին և հանդուցեալ վերին աստիճանի անշա-

հաս իր ու թիւնը, որի ազատից կարող էր մինչ այն, որ քանիցս անգամ քաղաքային խորհուրդը առաջարկեց աւելացնել նրա ուսմանը, սակայն նա չընդունեց և իր ստացած 4000 ռուբլ ուսմանը ևս ամբողջապէս նուիրում էր քաղաքին ինքն ընտանիքներին: Պարոն ձայնաւորը իր յայտարարութիւնը վերջացնում էր առաջարկելով դոմային 1) ի յիշատակ հանդուցեալ քաղաքային տարրական դպրոցներից մէկը անուանել իշխ. թումանովի անունով: 2) կանգնել մի յիշատակարան Արհեստաւորաց ռուսաւարանում և 3) հանդուցեալ պատկերը կախել դոմայի դահլիճում և Արհեստաւորաց ռուսաւարանում: Ձայնաւոր պ. Յովհաննիսյանի առաջարկութեամբ դոման վճարեց այդ ինչպիսի յետաձգել հետևող նիստերից մէկին: Սրանից յետոյ քաղաքապետը առաջարկում էր շարունակել նիստը, թէ փակել իշխ. թումանովի մահուան առիթով: Չը նստելով, որ պ. Ալաղաթով սխալում էր, որ այդպիսի հարց մինչև անգամ աւելորդ է առաջարկել և այդպիսի հարցերը չեն քուէարկվում, քաղաքապետը շարունակեց պարագաները: Պարագանից երկուրդ ինչպիսի էր քաղաքային ռուսաւարանական Մասնագործի գեկուցումը 1880—1885 տարիները գործունէութեան վերաբերութեամբ թէ անտեսական և թէ ռուսաւարան մասերի Այդ գեկուցումը առանձին տեսութիւնով տրուվում էր և նախապէս ուղարկված էր ձայնաւորներին: *

Քաղաքապետը առաջարկում էր թէ՛ կը կամ. նայարդեք խորհուրդը դրա՞րից այդ հարցի քննութեամբ, թէ՛ այդ ևս կը յանձնի քաղաքային հաշիւները վերաքննող մասնագործին: Այս հարցի մասին ձայնաւոր պ. Ալաղաթով արեց մի քանի սուր նկատողութիւններ. պ. ձայնաւորը նկատում էր որ մասնագործը 3 տարում ծախսել է ռուսաւարանների վրա (1 արհեստաւորաց և 7 տարրական) 91,118 ռ. սակայն ձայնաւորներից շատերը այսօր չը գիտեն թէ ինչ ռուսաւարաններու ընդհանուր գումարը կը գտնուի նրանք, ովքեր են ռուսաւարանները, ինչ արդիւնք են տալիս դրանք, քաղաքին, ինչ ծրարով են առաջնորդվում և այլն և այլն, այն ինչ իրան յայտնի են բազմաթիւ գեղձուներ թէ՛ ռուսաւարան և թէ՛ անտեսական մասերի վերաբերութեամբ: Ուստի և պ. ձայնաւորը առաջարկում է խորհրդին ընտրել իրանց միջոց առանձին մաս-
*) Մենք կը ծանօթացնենք «Մշակի» ընթերցողներին գեկուցման հետ մանրամասնօրէն: Գ. Չ.

«Շատախում» (323), այլ վաստորականի Անձե-
ցեցեաց դաւառում, ինչպէս մի տեղ վկայած է
(299) ինքը և հեղինակը:

Սուտ է, Վայցձերի մէջ չէ ասված, թէ Հոգ-
ուց վանքը գտնվում է Շատախում, այլ Անձե-
ցեցեաց դաւառում, ինչպէս ցոյց է տուել հեղինակը:

17. «Որ Միւր-Մատուր եղիլի լինելու վրայ իսկ
բաղձնիք և մէջնիք (?) քուրդ, սխալ է ասել թէ
քուրդը քուրդ դէմ վրին» (324):

Բողոքովին անհասկանալի է: Ես այդքանս եմ
միայն հասկանում, որ պ. Հայկունին ուզում է
ասել թէ քուրդի կելիլի հետ կուռացնելը՝ չէ
նշանակում քուրդը քուրդ դէմ վրին, որովհե-
տեա և կելիլի քուրդ չէ: Պ. Հայկունին, ինչպէս երե-
ւում է, քուրդի և կելիլիները վրա դատում է նոյն
հայացքով, որպէս նրա նմանները դատում են
հայ-բողոքականների և հայ լուսաւորականների
վրա: Ես կելիլի քուրդ չէ համարում, որովհե-
տեա կելիլի ուրիշ կրօնք է պատկանում: Եղիլի
անունը կրօնի անուն է և ոչ թէ ցեղի, կելիլին
նոյնպէս քուրդ է, թէ և մասնաբաժան կրօնին չէ
պատկանում:

18. «Որ ս. Տիրամօր վանքը գտնվում է ոչ թէ
լիւմ անապատի հանդէպ, Կորդուաց լեռների մէջ
(363—368), այլ վաստորականի Գնունիք կու-
ված դաւառում մէջ»:

Վաստորականի Գնունիք կուված դաւառը մի-
թէ լիւմ անապատի հանդէպ չէ: Պ. Հայկունին
թող նայէ Վնեսեկում ստված 1849 թվի քար-
տէպի վրա, բայց պէտք է գիտնայ, որ մշակու
դաւառը ուրիշ անուններ ևս ունի—Քաջբերդիկը-
Աղիւլիտ, Արճիշակովիտ և այլն: Բարձրին վէպ
է գրել աշխարհագրութեանը դասագիրք չէ գրել
որ այդ բոլոր անունները շարքէ միմեանց մօտ:

19. «Որ «Տիրամօր վանք» ասածը չէ կարող
վանահայր և վարդապետ միաբաններ ունենալ
(365), վանս դի դա վանք չէ, այլ գիւղական եկե-
ղեցի միայն «Տիրամօր վանք» անունով: Եւ ու-
րեմն այդ վանքում ոչ երբեք կարող էին վանքի

«Մղղղիներ» ձեռքով կատարվել այն եղեւնա-
գործութիւնները, տարածվել այն տարախոսիկ
հիւանդութիւններն, ինչ որ նկարագրած է պ.
Ռաֆֆի իւր վէպի 363—380 երեսներումը:

Պ. Կրիտիկոսի լռիկան ինձ դարձնում է:
Գիւղական եկեղեցին չէ կարելի վանք կոչել:
Իսկ իթէ Տիրամօր վանքը, պ. Հայկունու կար-
ծիքով, այժմ միաբաններ չունի, դա չէ զրկում
նրան վանք լինելուց: Հարկաւոր վանքեր ու-
նենք, որ դուրի են միաբանները: Իսկ թէ «Մղղ-
ղիներ» ինչ դեր են խաղում այնտեղ, —այդ
դրինքը պ. Հայկունին կարգաց հայր Սրբանձտեան-
ցի («Մասնա») զբղից բերած վկայութիւնների մէջ,
որ իսկապէս նրանք են կազմում վանքի միաբա-
նութիւնը և տաճկաց Հայաստանի ու Պարսկաս-
տանի բոլոր հայաբնակ վիճակները բաժանել են
իրանց մէջ, և «ուրեկներ» ասում, այդ եր-
կրներում մաս են ածում:

20. «Որ «Նին Տարիքը» չէ կարող այժման
Ջուլամերիկը լինել (469), որովհետեւ թէ Ջուլամե-
րիկը (փոքր Աղբալ) և թէ Տարիքը տարբեր դա-
ւառներ են մի և նոյն կործանը կոչում նահան-
գում»:

«Վայցձերի» մէջ այսպէս է ասված. «Այս եր-
կրը (Ջուլամերիկը), որ մեր հին Տարիքը կամ
կորդիքը դաւառն է և այլն: Պէտք է գիտնալ, որ
պատմական—աշխարհագրական անունները դա-
րերի ընթացքում դանդաղան փոփոխութիւններ
են կրել: Ինչով է հաստատում պ. Հայկունին,
որ այժման Ջուլամերիկը հին Տարիքը կամ
կորդիքը չէ,—ինչով է հաստատում, որ նրանք
տարբեր դաւառներ են: Այժման Ջուլամերիկը չէ
կարելի համարել, պ. Հայկունու կարծիքով, փոքր
Աղբալը, որովհետեւ փոքր Աղբալը ընկնում է
Չաք կամ Նեհրի գետի (Չաւ, Չարուս կամ Գայը
գետ) աջ կողմում, իսկ Ջուլամերիկը նոյն գետի
ձախ կողմում, ուր գտնվում էր հին Տարիքը կամ
կորդիքը: Նայեցէ՛ք Վնեսեկում ստված 49 թվի
արտէպի վրա, կամ հայր Աղիւլի «Տեղագիր

հայոց մեծաց» դրել հետ եղած քարտէսի վրա:
21. «Որ «Մի լուսնային բարձրաւանդակութիւն
(?) կազմող փոքր Աղբալը» (426) ոչ երբեք կա-
րող է վաստորականում լինել, քանի որ նա կոր-
ծայքում է և թէ վաստորականում եղած փոքր
Աղբալը չէ, այլ մեծ Աղբալը, որ այժմ կոչվում
է Սէր Ալպաղ կամ Գարադոշուր»:

Պ. Հայկունին ամեն ինչ խառնում է միմեանց:
Նայե, Գարադոշուրը (Տին Վրնշուրը) կոչված վի-
ճակը գտնվում է Պարսկաստանում, տես Տ. Ալիշանի
«Տեղ. հայոց մեծաց» եր. 57, սրբալ. 103, իսկ թէ
Մեծ Աղբալը և թէ փոքր Աղբալը գտնվում են
Տաճկաստանում: Ուրեմն Գարադոշուրուն և Մեծ
Աղբալը տարբեր երկրներ են: Գարադոշուրուն Մեծ
Աղբալից այնքան հեռու է, որ նրանց մէջ մի քա-
նի ուրիշ վիճակներ են ընկած: Երկրորդ, այժման
բաժանման համեմատ Մեծ և փոքր Աղբալներ չը
կան: Իսկ Սէր Ալպաղ (որ քուրդերն նշանակում է
Աղբալի գրուրը) կոչվում է այդ երկրի այն մա-
սը միայն, որ կազմում է տաճկաց այժման սահ-
մանադրուրը պարսից Սալմաստ դաւառի հետ:

22. «Որ «Ս. Ղազարու կամ Առաքելից վանքը
Մուշի մէջ (239) չէ գտնվում, այլ այդ քաղաքից
բաւական հեռու Միւրիկատար լեռան ստորոտը»:
Սուտ է, Վայցձերի մէջ չէ ասված թէ ս. Ղա-
զարու վանքը գտնվում է Մուշ քաղաքի ուսմ,
այլ «Մուշի մէջ» (299), ուր պէտք է հասկանալ
դաշար և ոչ թէ քաղաքը: Այս վանքը գտնվում է
Մուշ քաղաքից 2 ժամ հեռավորութեամբ միայն
և յայտնի է անուանով «Վշու Սուրբ Առաքելը»
(տես հայր Կնճիճեանի «Ստորագրութիւն Հին Հա-
յաստանեաց» եր. 102—103):

Ինչից են առաջ գալիս պ. կրիտիկոսի այդ բո-
լոր խառնախմբութիւնները: Գիտութեան
բացակայութիւնից: Ճշմարիտ գիտնականի մէջ
զգուշութիւնը հասնում է մինչև երկնատեղիներ:
*) Մի մտայէ՛ք, որ Ներսիսեան դարձից պատ-
կանելի հողաբարձութիւնը յանձնել է այդ մար-
դուն Հին Հայաստանի աշխարհագրութեան դա-
սերը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՍՆԱՌՐ ՀԱՌԱՏԱՐՄԱՍԱՐ

Պ. Մ. ԼԵՖԵՂԻՆՍԿԻ

Տեղափոխվեց Սոլոյակիայա փողոց, Սպան- գարեանի տունը № 12, կալուածական բանկի դիմաց:

4—10 (2)

Ձ. Գրքերի գործարանը—կովկասեան գրավա- ճառանցիկ հրատարակութեամբ լոյս տեսաւ

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ ԵՐԵՎԱՆԻ

«ՋՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ»

անունով աշխատասիրութեան առաջին մա- սին.—ԱՐՁԱԿ: Գինն է 1 ա. 25 կ.

Գուճարով առնողներին 1 ա.

Գիրքը բաղկացած է 470 մեծագիր երեսից:

Մամուլի տակից դուրս եկաւ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒԻ ԲԵՐԱՎԱՆՈՒԹԱՆ

Տ Ա Ր Ե Ր Ք Ը

Երկրորդ մասը.

Աշխատասիրեց Ն. ՅԵՐՂԵՆԻՆԻՍԻԱՆ:

Գինն է 50 կ.:

Վաճառվում է կենտրոնական գրավաճառա- նոցում: Գուճարով գնողները 20% զիջումն ունեն: 2—5.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՅԻ Հողաբարձական խորհրդարա- նում հոկտեմբեր ամսից 12-ին, երեկոյան 7 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկի- նաձրդի) կապարով տալու հին Դպրանոցի ներքնայարկի 32 կրպակները: Պայմանա- թուղթը կարելի է կարգալ Հողաբարձու- թեան գիււնատան մէջ ամէն օր, բացի կիւրակէից և աճուրդից, առաւօտեան 10-ին մինչև 12 ժամ: 2—3

ՄԱՒՎՈՒՄ ԵՆ Հետեւեալ ԿԱՅՔԵՐԸ ԳԵյՄ- տիլաների Ստասակի Սօփիանիկ ՄԵԼԻՔ—ԱՂԱ- ՄԱԼԵԱՆՅԻ ԵՐԵՒԱՆՈՒՄ: ա) Տունը, որի մէջ ինքն Աղամալեանն է կենում, նրան կից այգիով բ) տունը, որի մէջ գեանդված է կազնաչէ յստփօն, գ) Գալիի արուարձա- նում գտնվող այգին: Հարցնել ԳՆԵՐԻ մասին իրան կալուածա- տիրոջ: 4—5

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակալիս թղթի վրա:

Միակ գործակա ԼԻՍԱՍՆ Խ տեղը կան ամեն րի համար մեծ ԳՐԻՉՆԵՐ էժան քան թէ նոյնպէս թԱՆԱՔԻ, ներ, զմեռ, ՄԱ րիչներ, պինտի ներ, ծխախոտի ներ, ածելիք, ս ներ, ԲԱԶԿԱԹՈՐ- րարկու կախելու ՏՆՆԵՐ, անտաներ, բրիտանական մետաղից իրեր, ԼԱՊՏԵՐ- ՆԵՐ, զգալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, Ջրամաններ, երես լուսնալու ամաններ, Ֆիլտրա, կրան- շփոցներ, այգու մկրասներ, շորի շէտակա- զլիտի, երկաթէ թելերից, ձիու համար: Մա- կենաօջներ: Բժշկական թուղթ վատերկրօղի- տի համար և այլն և այլն:



լուծիւն ԱՆԳ- ԱՆՈՒԹ: Նոյն տեսակ ձեռագրե- քանակութեամբ ամեն ձիւ 25% ուրիշ տեղ: Կան թուղթ, տեղապ- ՏՆՆԵՐ, քարեզ- ԳՐՁԱԿՈՒ, քսակ- ամաններ, ՄԿՐԱՏ- րոցներ, խալիչա- ՄԱՀԱՎԱՍ, վե- համար իրեր, ԳՕ- ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, իրեր, ԼԱՊՏԵՐ- ՆԵՐ, զգալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, Ջրամաններ, երես լուսնալու ամաններ, Ֆիլտրա, կրան- շփոցներ, այգու մկրասներ, շորի շէտակա- զլիտի, երկաթէ թելերից, ձիու համար: Մա- կենաօջներ: Բժշկական թուղթ վատերկրօղի- տի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ:


54—100

ԲԵՅՈՒԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ, Միխայլովի փողոցի վրա, տուն Գուրգենիկովի № 81, շարունակ ընդունում է աշակերտներին: 10—10 (1)

13-го Октября сего 1883 года, въ день го- довины лечебницы для приходящихъ боль- ныхъ, учрежденной Тифлисскими гражданами въ память 4-го апрѣля 1866 года, имѣетъ быть въ оной молебствіе, въ 12-ть часовъ утра, о чемъ дирекція оной лечебницы имѣетъ честь увѣдомить для свѣдѣнія желающихъ почтить ее своимъ посѣщеніемъ. Директоръ лечебницы Д. Лисицевъ. 2—3.

ՋՕՐՔԵՐԻՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ՀԱՍՑՆՈՂ ԹԻՖԼԻՍԻ ԱՐ- ՀԵՏԱՆՈՅԸ, որ գտնվում է Նաւ- թուլի մէջ, հրաւիրում է աշխատե- լու ԴԵՐՁԱԿՆԵՐԻՆ և ԳԵՐ- ՁԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ, որոնք ՁԵՈՒ- ՔՈՎ կարող են կարել համազգեստ- ներ և զինտարական շիններ, նոյնպէս և ոտքի ԿԱՐԵՄԵՔԵՆԱՅԻ վրա աշխատել ԳԻՏԱՑՈՂ գերձակներին և գերձակահիներին: 1—10

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Table with 6 columns: Կայարան, Գալիս է, Գնում է, Կայարան, Գալիս է, Գնում է. listing various stations and prices.

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ Լ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Table with 6 columns: Կայարան, Գալիս է, Գնում է, Կայարան, Գալիս է, Գնում է. listing prices for various goods.

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏԵՐԻԻ Լ ՓՈԹԻԻ ՄԷՋ

Table with 6 columns: Կայարան, Գալիս է, Գնում է, Կայարան, Գալիս է, Գնում է. listing prices for various goods.

Վերականգնեցող ՄՍԿՄՍՍ- ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԻՆՍԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերագար- ձնող: Գինը 2 ռ. շիշը, ՓՈՍՏԱ- ՅՈՎ ուղարկված 2 ռ. 49 կոպ. ԱՆԳԼԻՍԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԻՆՍԱՅԻ ԻՂ, մազերը ամրացնելու հա- մար, 1 ռ. ամանը և իրձին զլիա- ցաւի դէմ, ՏՈՒՍԼԷՏ Ի ՍՍ- ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն 56—100

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆԸ տեղափոխվեց իր առաջվայ բնակարանից Սերգիեվսկայա փողո- ցի վրա, Միրզոբի տանը: Այնտեղ առնում են մանկական գրքեր և ամառկիները: 4—4 (1)

Advertisement for 'ЖЕСТЯНКА 20 ЧАШЕКЪ 1 РУБ.' (Candy box) with 'ШОКОЛАДЪ РЕТАБЛИЕРЪ С. СІУИ К. ВЪ МОСКВѢ' logo and 'ПРИ ТРЕБ. ПОЧТОЙ ПРИКЛАТАТЬ НА ОТПРАВКУ.' text.

Large advertisement for Singer sewing machines. Includes the text 'ՄԱՆՈՒՑԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ' and 'Ձ Ի Ն Գ Ե Ր' (Singer). Features an illustration of a Singer sewing machine and the Singer logo with 'THE SINGER MFG. CO. N. Y. TRADE MARK'.